




ՄԱՍՆԱԳՅԱԾՈՒՄ • ՓՈՐՈՒ • ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ISSN 1829-0280

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2020 [1]
ԵՐԵՎԱՆ



ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՔՅԱՆ

ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն և ներդրումային գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման մեթոդների և մեխանիզմների, դրանց արդյունավետ կիրառումը պայմանավորող գործոնների, ինչպես նաև ինովացիոն և ներդրումային գործունեության խթանման պետական քաղաքականության ուսումնասիրությանը:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս հատկապես կարևորվում է ինովացիոն գործունեության հեղուկալ ինստիտուցիոնալ հիմքերի առկայությունը՝ ներդրումային բարենպաստ միջավայր, համակարգված և համալիր իրավական դաշտ, ինովացիոն արդյունավետ ենթակառուցվածք և կադրային ներուժ, ֆինանսավորման մատչելի աղբյուրներ, ինովացիոն արտադրանքի նկատմամբ պետական պաշտպանություն, ինովացիոն արտադրանքի արտահանման բարենպաստ պայմաններ, արտաքին շուկաների հետ գործարար կապեր, ազատ տնտեսական գոտիներ, ինովացիոն կլաստերներ (տեխնոպարկեր, տեխնոպոլիսներ, բիզնես-ինկուբատորներ և գիտական լաբորատորիաներ): Հոդվածում ՀՀ բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների օրինակով քննարկվել են դրանց ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման որոշակի մեխանիզմներ:

Հիմնաբառեր. տնտեսություն, ներդրումներ, ինովացիոն գործունեություն, խթանում, պետական քաղաքականություն, զարգացում, արդյունավետություն

JEL: D20, G02, O32

Ներածություն: Հայաստանում ձևավորված տնտեսական հարաբերությունների ներկա համակարգի խոցելի կողմերը, հանրապետության բարդ աշխարհաքաղաքական դիրքը, տարածաշրջանային զարգացումներից մեկուսացված լինելու և մրցակցային առավելությունները լավագույնս չօգտագործելու հանգամանքը, տնտեսական համագործակցության արդյունավետ մեխանիզմների բացակայությունը, կառավարման կառուցակարգերի անկատարությունը, ինչպես նաև Արցախի հիմնախնդիրը հրամայաբար պահանջում են երկրի տնտեսական զարգացման ռազմավարության մշակում և դրա հետևողական ներդրում:

Հայաստանի Հանրապետության համար տնտեսական զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություն պետք է դառնա բարձր տեխնոլոգիաների ոլորտի առաջանցիկ զարգացումը, ինչը ենթադրում է ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում, ինովացիոն գործունեության խթանում, կառավարման արդիական կառուցակարգերի արմատավորում, ներդրումային գրավչության բարձրացում, արտահանմանն ուղղված արտադրությունների կազմակերպում և այլն: Դրա համար Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները, որոնք ձևավորվել են դեռևս կենտրոնացված կառավարման տարիներին: Հայաստանը ժողովրդատնտեսական մեծ համալիրում առաջատար դիրքեր էր գրավում տիեզերական հետազոտությունների, հաշվողական տեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, նավիգացիոն սարքավորումների, կիսահաղորդիչների և բարձր տեխնոլոգիաների արտադրության այլ ոլորտներում: Մեր երկրում ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը կնպաստի ներդրումային գործունեության ակտիվացմանը, ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը և տնտեսության կայուն զարգացմանը:

Ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության ներկայիս վիճակը պահանջում է տնտեսության ինովացիոն զարգացման խթանման արդյունավետ ուղիների բացահայտում և դրանցով նպատակամետ գործունեության իրականացում, ինչով էլ պայմանավորված է կատարված հետազոտության արդիականությունը:

Գրականության ակնարկ: Մրցակցային միտումների ուժգնացման պայմաններում տնտեսության արդիականացումը և դրա զարգացման ուղղությամբ կայուն աճի ապահովումը պահանջում են նպատակամետ և ուղղորդված ինովացիոն գործունեություն, որի հետ կապված հարցերը մշտապես գտնվել են գիտագործնական ուսումնասիրությունների առանցքում¹:

Ինովացիոն գործունեության տեսամեթոդաբանական հիմքերը և այդ գործընթացի մակրոտնտեսական կարգավորման առանձնահատկություններն առավել ամբողջականորեն ներկայացված են *Ե.Վ. Բոգատովայի* ուսումնասիրություններում², որոնցում հիմնավորված է ինովացիաների կառավարման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման անհրա-

¹ Տե՛ս **Վ. Բոստանջյան, Ա. Չախարյան**, Ինովացիոն գործունեության խթանման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», 2019 N3, էջ 71-91:

² Տե՛ս **Богатова Е.В.**, Инновационная экономика: монография / Е.В. Богатова. М., Издательство «Русайнс», 2014, ISBN 978-5-4365-0168-0:

ժեշտությունը, արժեթղթերի շուկայի զարգացման և փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտում նորարարական գործունեության ակտիվացման կարևորությունը: Այստեղ առաջարկված են ինովացիոն գործունեության խթանման և գնահատման մեթոդական մոտեցումներ:

Ռուսաստանի Դաշնության տնտեսությունում ինովացիոն գործունեության ակտիվացման և դրա մրցունակության բարձրացման հարցերը համակողմանիորեն ուսումնասիրված են Ռ.Ա. Ֆախխուտդինովի հետազոտություններում³: Նրա կարծիքով՝ ինովացիոն գործունեության ակտիվացման արդյունավետ գործիք կարող է դառնալ «Մեթոդիկա \Rightarrow Տնտեսություն + Տեխնիկա + Կառավարում \Rightarrow Մրցունակություն» (ՄՏՏԿՄ) համակարգը, որը տնտեսության, տեխնիկայի և կառավարման ինտեգրմամբ մեծապես կնպաստի տնտեսավարող սուբյեկտների մրցունակության բարձրացմանը: Հեղինակը հատուկ ուշադրություն է հատկացրել ինովացիոն կառավարման գիտական հիմքերին, որոնք ներառում են անհրաժեշտ իրավական ակտերը, առաջարկվող մոտեցումները և ինովացիոն տնտեսության գործիքները, մշակել է նաև ՌԴ գիտատեխնիկական և ինովացիոն ներուժի պահպանման և զարգացման ռազմավարական մոտեցումներ:

Տարբեր մակարդակներում ինովացիոն գործընթացների կառավարման առանձնահատկությունները ներկայացված են Լ.Պ. Գոնչարենկոյի ուսումնասիրություններում⁴: Այստեղ բացահայտված են ինովացիոն գործունեության ակտիվացմանը նպաստող և խոչընդոտող հիմնական գործոնները: Աշխատանքում անդրադարձ է կատարված ինովացիոն գործունեության պետական կարգավորման և ինովացիոն կառավարման գործիքակազմի ձևավորման հիմնահարցերին, ինչպես նաև առաջարկված են ինովացիոն ձեռնարկատիրության պաշտպանության մեխանիզմներ:

Ինովացիաների ներդրման գործընթացում հանդիպող հիմնական մարտահրավերներին, ինչպես նաև դրանց դիմակայելու արդյունավետ միջոցներին առնչվող խնդիրների լուծումը դիտարկված է Վ.Գովինդարաջանի և Բ.Թրիմբլի աշխատություններում⁵: Հեղինակները նկարագրում են ինովացիոն նախագծերի իրագործման համար անհրաժեշտ անձնակազմի հավաքագրման և կառավարման առանձնահատկությունները, տվյալ գործընթացին բնորոշ ռիսկերի արդյունավետ կառավարման կառուցակարգերը և այլն: Այստեղ Allstate, BMW, Timberland և Nucor ընկերությունների փորձի հիման վրա առաջարկված են ինովացիաների ներդրման արդյունավետ մոտեցումներ:

Նորարարական գործունեության ռազմավարությունների մշակման և այդպիսի գործունեության կառավարման ժամանակ, որպես կանոն, հանդիպում են տարբեր անորոշություններ: Նման պայմաններում ինովացիաների

³ Տե՛ս Ֆախխուտդինով Ք.Ա., Инновационный менеджмент: Учебник для вузов. 6-е изд., СПб.: Питер, 2011, ISBN 978-5-469-01658-8:

⁴ Տե՛ս Գոնչարենկո Լ.Պ., Инновационный менеджмент: Учебник для вузов. 2-е изд. Издательство Российского экономического университета имени Г.В. Плеханова, М., 2018, 487 с., ISBN 978-5-9916-7709-7:

⁵ Տե՛ս Govindarajan V., Trimble C., The Other Side of Innovation: Solving the Execution Challenge. Harvard Business Review, 2010, 226 p. ISBN 978-1-4221-6696-3:

ներդրման, ինովացիոն նախագծերի ֆինանսավորման, ինչպես նաև մարդկային ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունները ներկայացված են *Ա. Աֆուահի* աշխատություններում⁶: Հիմնվելով սեփական փորձի վրա՝ հեղինակը բացահայտել է ինովացիաների ներդրման գործընթացի կառավարման և ֆինանսավորման գործառույթների միջև առկա սերտ կապը, մշակել է նաև կայուն եկամտի ստացման ռազմավարություն, որը ենթադրում է կառավարման, մարքեթինգի և ֆինանսների գործառույթների համակարգում:

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս միտումների համակողմանի վերլուծության հիման վրա *Լ.Ս. Չիժովան* առաջարկում է ինովացիոն բնույթի զբաղվածության համապարփակ հայեցակարգի մշակման գործնական ուղիներ⁷: Հեղինակը հիմնավորում է, որ Ռուսաստանի Դաշնության համար տնտեսության զարգացման հումքային մոդելի իրատեսական այլընտրանք է ինովացիոն զարգացման ուղին, որը ենթադրում է մարդկային կապիտալի արդյունավետության բարձրացում և գիտելիքների ռացիոնալ օգտագործմամբ ինովացիոն առաջընթացի ապահովում:

Ինովացիոն ռազմավարության ընտրության և ինովացիոն նախագծերի կառավարման հիմնախնդիրները դիտարկված են *Ս.Դ. Իլենկովայի* աշխատություններում⁸: Աշխատանքում հեղինակը մշակել է ինովացիոն ռիսկերի կառավարման մոտեցումներ, առաջարկել է ինովացիաների և ինովացիոն գործունեության արդյունավետության գնահատման որոշակի մեխանիզմներ:

Ինովացիոն գործունեության հիմնական ուղղությունները մանրամասնորեն ներկայացված են *Ա. Բարկերի* աշխատություններում⁹: Հեղինակը նորարարությունը դիտարկել է որպես գիտական հետազոտությունների, ռազմավարական պլանավորման, ռիսկերի կառավարման, մարքեթինգի և ստեղծագործական մտածողության համադրման արդյունք:

Լ.Է. Մինդելին իր աշխատություններում¹⁰ ազգային նորարարական համակարգի ձևավորումը բացատրում է կայուն տնտեսական աճին անցման հնարավորությամբ: Հեղինակի կարծիքով՝ ազգային նորարարական համակարգի հիմնական մասնակիցների միջև փոխադարձ կապերի սխեման թույլ է տալիս բացահայտել նորարարական մեխանիզմների գործողության առանձնահատկությունները:

Ազգային նորարարական համակարգի կատարելագործման հիմնախնդիրները ներկայացված են *Ջ. Գելբրեյտի* աշխատություններում¹¹, որոն-

⁶ St'u **Afuah A.**, Innovation Management: Strategies, Implementation, and Profits. Oxford University Press; 2-nd edition, 2002, 400 p. ISBN 978-0195142303:

⁷ St'u **Чижова Л.С.**, Инновационная экономика: занятость, трудовая мотивация, эффективность труда: монография. М., Экономика, 2011, ISBN 978-5-282-03144-7.

⁸ St'u **Ильенкова С.Д.**, Инновационный менеджмент: учебник для студентов вузов, М., Издательство «ЮНИТИ-ДАНА», 2015, ISBN 978-5-238-01217-9:

⁹ St'u **Баркер А.**, Алхимия инноваций, М., Издательство «Вершина», 2004, ISBN 5-94696-038-5:

¹⁰ St'u **Миндели Л.Э.**, Основы инновационного менеджмента. Теория и практика: Учебник /Л.С.Барютин и др.; под ред. А.К. Казанцева, Л.Э. Миндели. 2-е изд. перераб. и доп., М., Издательство «Экономика», 2004, ISBN 5-282-02345-8:

¹¹ St'u **Гэлбрейт Д.К.**, Экономические идеи, https://studwood.ru/1560192/ekonomika/idei_printsipy_gelbreyta:

ցում հեղինակը կարևորել է պետական միջամտությունը տնտեսության տեխնոլոգիական զարգացման գործում: Նրա կարծիքով՝ ազգային նորարարական համակարգի ձևավորման գործում զգալի դերակատարում ունեն ասոցիացիաները, տարբեր միավորումները, ոչ առևտրային կազմակերպությունները և գործընկերությունները:

Ինովացիոն զարգացումներում ներդրումների արդյունավետության բարձրացման մեթոդները հիմնականում ներկայացված են Ու.Ֆ. Շարպի, Գ.Դ. Ալեքսանդերի, Դ.Վ. Բեյլիի հետազոտություններում¹²: Այստեղ հիմնավորված է ներդրումային ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը, մշակված են անորոշության պայմաններում ֆինանսական գործիքների արդյունավետ ընտրության մեխանիզմներ և այլն: Հեղինակները ներկայացրել են տարբեր երկրների արժեթղթերի շուկաների գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկել են միջազգային ներդրումների եկամտաբերության բարձրացման մոտեցումներ:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են ծառայել տնտեսագիտության տեսության, մակրո- և միկրոտնտեսագիտության, կառավարման, ֆինանսների, միջազգային տնտեսական հարաբերությունների դասական, նորդասական աշխատությունները, զարգացած և զարգացող, ինչպես նաև անցումային տնտեսությունների վերաբերյալ տնտեսագիտական հետազոտություններն ու վերլուծությունները, ինովացիոն և ներդրումային գործունեության խթանման հիմնախնդիրներին վերաբերող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրատարակումները, գիտաժողովների նյութերը, տվյալ ոլորտի գործառնությունները և փոխհարաբերությունները կանոնակարգող նորմատիվ բնույթի իրավական ակտերը և այլն:

Հետազոտությունը խարսխված է Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի (ներդրումային բարենպաստ միջավայրի, համակարգված և համալիր իրավական դաշտի, ինովացիոն արդյունավետ ենթակառուցվածքի և կադրային ներուժի, ֆինանսավորման մատչելի աղբյուրների, ինովացիոն արտադրանքի նկատմամբ պետական պատվերի, ինովացիոն արտադրանքի արտահանման բարենպաստ պայմանների, արտաքին շուկաների հետ գործարար կապերի, ազատ տնտեսական գոտիների և ինովացիոն կլաստերների) ձևավորման միջոցով ինովացիոն և ներդրումային գործունեության խթանման մեխանիզմների վերլուծության վրա:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի, ինչպես նաև Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների,

¹² Տե՛ս Շարп У.Ф., Александр Г.Д., Бэйли Д.В., Инвестиции, Учебное пособие, М., Издательство: НИЦ Инфра-М, 2016, 1040 с., ISBN 978-5-16-002595-7:

այդ թվում՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հրապարակումներն ու զեկույցները, միջազգային տարբեր պարբերականների գիտական ուսումնասիրությունների արդյունքները, փորձագիտական գնահատականները և ժամանակակից այլ տեսամեթոդական նյութեր:

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են գրաֆիկական, համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների և գիտական վերացարկման մեթոդները:

Վերլուծություն: Հայաստանի տնտեսության կառուցվածքի արդիականացման և արագընթաց զարգացման կարևորագույն նախապայմանը ինովացիոն գործունեության ակտիվացումն է: Այն, անշուշտ, պահանջում է նպատակամետ պետական կառավարում, գիտատեխնիկական ուղղորդված հետազոտությունների իրականացում, ինովացիոն և ներդրումային գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, համապատասխան կառույցների ներգրավում և համակարգված քաղաքականության իրականացում: Այս տեսանկյունից, հատկապես կարևորվում է համապատասխան ինստիտուցիոնալ հիմքերի առկայությունը, որոնցում առանձնահատուկ նշանակություն ունի.

- ներդրումային բարենպաստ միջավայրի,
- համակարգված և համալիր իրավական հիմքերի (հատկապես՝ հարկային համակարգի),
- ինովացիոն արդյունավետ ենթակառուցվածքի և կադրային ներուժի,
- ֆինանսավորման մատչելի աղբյուրների,
- նորարարական արտադրանքի նկատմամբ պետական պատվերի,
- նորարարական արտադրանքի արտահանման բարենպաստ պայմանների,
- արտաքին շուկաների հետ գործարար կապերի,
- ազատ տնտեսական գոտիների,
- ինովացիոն կլաստերների (տեխնոպարկերի, տեխնոպոլիսների, բիզնես-ինկուբատորների և գիտական լաբորատորիաների) **առկայությունը:**

Ինովացիոն գործունեության նշված ինստիտուցիոնալ հիմքերի շարքում չափազանց կարևոր է **ներդրումային բարենպաստ միջավայրի** դերը: Վերջինս քաղաքական, տնտեսական, կազմակերպական, իրավական և այլ գործոնների ամբողջություն է, որով կանխորոշվում և գնահատվում են ներդրումային ռիսկերը, դրանց արդյունավետ կառավարման հնարավորությունները և այդպիսով՝ ինովացիոն ծրագրերի իրագործման հետ կապված ներդրումների գրավչությունն ու նպատակահարմարությունը: Ներդրումային բարենպաստ միջավայրը բնութագրվում է քաղաքական կայունությամբ, հստակ օրենսդրությամբ, ներդրողների պաշտպանվածությամբ, ինչպես նաև ցածր տոկոսադրույքներով և արտոնություններով: Այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր ներդրող, առաջին հերթին, գնահատում է ներդրումային միջավայրը՝

հենվելով սեփական փորձի, փորձագիտական, ինչպես նաև համապատասխան միջազգային կառույցների գնահատականների վրա¹³:

Ինովացիոն միջավայրի բարելավումը, նորարարությունների մշակումը, դրանց առևտրայնացումը խթանելու և կազմակերպելու, ինչպես նաև նշված գործընթացների մասնակիցների գործունեությունն ակտիվացնելու համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ¹⁴:

Մեր հանրապետությունում ինովացիոն միջավայրի բարելավման ուղղությամբ առկա են անհրաժեշտ նախադրյալներ: Համաշխարհային բանկի «Ձեռնարկությունների ինկուբատոր» ծրագրի շրջանակում գործում է *Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը*, որն աջակցում է հանրապետությունում ՏՀՏ ոլորտի զարգացմանը: Հիմնադրամը տարածաշրջանի խոշորագույն տեխնոլոգիական բիզնես-ինկուբատորներից և խորհրդատվական ընկերություններից մեկն է, որի գործունեությունն ընդգրկում է ոլորտի զարգացման գրեթե բոլոր հատվածները:

Հայաստանում ինովացիոն միջավայրի բարելավման գործում մեծ է *Մտավոր սեփականության գործակալության* դերը, որը կոչված է լուծելու մտավոր սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության, այդ բնագավառում տեղեկատվության ապահովման և միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման, ինչպես նաև կադրերի պատրաստման և պետական արտոնագրային հիմնապաշարների համալրման խնդիրներ:

ՀՀ-ում ինովացիոն գործունեությունը խթանելու առումով որոշակի դերակատարում կարող են ունենալ *Նորամուծության և ձեռներեցության ազգային և ինովացիոն համագործակցության ռուս-հայկական կենտրոնները*: Ազգային կենտրոնը մասնաճյուղեր ունի Գյումրիում, Վանաձորում, Հրազդանում և Կապանում: *Ռուս-հայկական կենտրոնի* հիմնական նպատակն ինովացիոն բաղադրիչի ամրապնդման և ընդլայնման միջոցով երկու երկրների տնտեսական համագործակցության ինտեգրացիոն գործընթացներին օժանդակումն է:

Ինովացիոն և դրա հետ կապված ներդրումային գործունեությունը, որպես կանոն, առնչվում են ամենատարբեր ռիսկերի հետ, որոնց կանխատեսումն ու գնահատումը, անշուշտ, պահանջում են դրանց կառավարման արդյունավետ համակարգի առկայություն¹⁵: Վերջինս պետք է լայն հնարավորություններ ունենա դիմակայելու ինչպես քաղաքական, տնտեսական և ֆինանսական, այնպես էլ արտադրական, կառավարչական, իրավական, ֆորսմաժորային և այլ ռիսկերի: Դրանք հաղթահարելու լավագույն գործիքներից մեկը գործարարության ապահովագրությունն է, որը կարող է արտահայտվել պատասխանատվության, գույքի և գործարարության ընդհատման ապահո-


¹³ Տե՛ս World Bank (Doing Business), Moody's Investors Service (Moody's), Fitch Ratings և Standard & Poor's (S&P):

¹⁴ Տե՛ս **Шалаев И.А.**, Теоретические основы и особенности формирования инновационной среды региональной экономической системы, Вестник ОрелГИЭТ, 2013, №4(26), էջ 112, <https://orelgiyet.ru/docs/262013/25.pdf>:

¹⁵ Տե՛ս **Шапкин А.С., Шапкин В.А.**, Экономические и финансовые риски. Оценка, управление, портфель инвестиций: Учебное пособие, 9-е изд., М., Дашков и К, 2018, էջ 10-15:

վագրությամբ: Վերջինիս պարագայում փոխհատուցվում են այն ծախսերը, որոնք առաջացել են տարբեր աղետների պատճառով: Գործարարության ընդհատման ապահովագրության պատասխանատվության գումարի մեջ կարող են ներառվել չստացված միջին շահույթը, աշխատակիցների աշխատավարձը, սոցիալական ապահովագրության և վարձակալության վճարները, ամորտիզացիոն գումարները, արտադրության արդյունքի հետ չկապված հարկերը և այլ ընթացիկ ծախսերը¹⁶:

Ինովացիոն միջավայրի բնութագրական կողմերից է նաև պետական բյուջեի հարկային եկամուտների շարժընթացը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ծավալը, մլն դրամ (2009-2019 թթ.)¹⁷

Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2009-2019 թթ. ՀՀ-ում գրանցվել է հարկային եկամուտների շարունակական աճ, ինչը, անշուշտ, պայմանավորված է ինչպես հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմամբ, այնպես էլ գործարար ակտիվության աճով: Դա կարևոր նախապայման է ինովացիոն միջավայրի բարելավման առումով:

Ինովացիոն և ներդրումային գործունեության կարևորագույն ինստիտուցիոնալ հիմքերից է **համակարգված և հարաբերականորեն կայուն օրենսդրության առկայությունը**: Վերջինիս ապահովումը ենթադրում է գործող օրենքների շարունակական կատարելագործում՝ ձևավորված շուկայական իրողություններին համապատասխան: Միևնույն ժամանակ, պետք է բացառել օրենքների մակերեսային և հաճախակի փոփոխությունները, որոնք, որպես կանոն, որոշակի անհարմարություն և անորոշություն են ստեղծում ներդրողների շրջանում: Հետևաբար, հատկապես հարկային հարաբերությունների կարգավորումը չպետք է ենթարկվի հաճախակի փոփոխությունների և ժամանակային առումով պետք է ունենա որոշակի կայունություն: Մասնավորապես, ՀՀ-ում հարկային օրենսգրքի ընդունման օրվանից այն լուրջ քննարկումների առարկա է դարձել բիզնեսի տարբեր ոլորտները ներկայացնող գործարարների շրջանում: Արդյունքում, անհրաժեշտություն է ծագում օրենք-

¹⁶ Տե՛ս **Разумовская Е.А., Фоменко В.В.**, Страховое дело: учебное пособие, Екатеринбург: Гуманитарный университет, 2016, էջ 20-21.

¹⁷ Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009-2019 թթ. հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ: <http://www.armstat.am>:

ներում ավելի հաճախակիորեն կատարել փոփոխություններ և լրացումներ, ինչը ներդրողների շրջանում առաջ է բերում ոչ կառուցողական տրամադրություններ: Համակարգված և կայուն օրենսդրության տեսանկյունից անհրաժեշտ է կարևորել բաժնետոմսերից ստացված եկամուտների հարկման հիմնախնդիրը: Դրա ոչ ճիշտ լուծումը կարող է որոշակիորեն խոչընդոտել բաժնետիրական կապիտալում ներդրումների իրականացումը, ինչը կհանգեցնի ինովացիոն և ներդրումային ակտիվության զսպմանը:

Կայուն օրենսդրաիրավական դաշտի ձևավորումից բացի, մեծ նշանակություն ունի նաև ընդունված օրենքների իրագործման արդյունավետ մեխանիզմների ապահովումը: Խոսքը, առաջին հերթին, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի իրացման ապահովման մասին է: Օրենսդրաիրավական բնույթի գրեթե բոլոր այլ հիմնախնդիրները պայմանավորված են նշված իրավունքների ոչ պատշաճ իրագործմամբ:

Ինովացիոն և ներդրումային գործունեության կարևորագույն ինստիտուցիոնալ հիմքերից մեկը **արդյունավետ ենթակառուցվածքն** է: Այն, իր հերթին, ենթադրում է համապատասխան լոգիստիկ համակարգի առկայություն, որը ՀՀ-ում ինովացիոն ենթակառուցվածքի ձևավորման կարևորագույն խնդիր է ոչ միայն գիտատեխնիկական ոլորտի զարգացման, այլև ազգային տնտեսության մրցունակության բարձրացման առումով:

Շուկայական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակահատվածում ՀՀ-ն մշտապես առնչվել է ֆինանսական ռեսուրսների սակավության հիմնախնդրին: Ակնհայտ է, որ դա լուրջ դժվարություններ է ստեղծում ինովացիոն և ներդրումային գործունեության համար: Այդ առումով, հանրապետության յուրաքանչյուր ընկերության կարևորագույն խնդիրն է սեփական միջոցների նպատակամետ և արդյունավետ օգտագործումը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է հետևողականորեն կիրառել արտադրական գործընթացների կազմակերպման ժամանակակից մոտեցումներ, ինչի արդյունքում հնարավորություն կընձեռվի առավելագույն չափով խնայել բնական և արտադրական ռեսուրսները: Ֆինանսական կայունության ապահովման համար ընկերություններին անհրաժեշտ է մշտապես փոփոխվող արտաքին միջավայրում պահպանել ակտիվների և պասիվների հավասարակշռվածություն և թույլատրելի ռիսկերի սահմաններում ապահովել վճարունակության ու ներդրումային գրավչության բարձր մակարդակ¹⁸:

ՀՀ ֆինանսական համակարգի ներկայիս ակնհայտ առաջատարը բանկային համակարգն է, որը տիրապետում է ֆինանսական ակտիվների 80%-ից ավելին¹⁹: Այս հանգամանքով պայմանավորված՝ հանրապետությունում ինովացիոն և ներդրումային գործունեության ֆինանսավորման ամենահավանական աղբյուրը բանկային վարկավորումն է: Հանրապետությունում դրա

¹⁸ Տե՛ս Վ. Բոստանջյան, Ա. Զախարյան, Ֆինանսական հնարավորությունների ընդլայնման ուղիները ՀՀ բաժնետիրական ընկերություններում, «Բանբեր ՀՊՏՀ», 2018, N2, էջ 122-133:

¹⁹ Տե՛ս Ֆինանսական համակարգ և վերահսկողություն, <https://www.cba.am/am/SitePages/fscintroduction.aspx>:

միջինացված տարեկան տոկոսադրույքի շարժընթացը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

«Ֆինանսական շուկայի միջինացված տարեկան վարկային տոկոսադրույքը (2009-2019 թթ.)»²⁰

Անվանումը	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Միջինացված տարեկան վարկային տոկոսադրույք	18.72	19.02	17.84	16.98	16.15	16.72	17.84	17.1	13.26	11.58	11.47

Վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ ֆինանսական շուկայի միջինացված տարեկան վարկային տոկոսադրույքի շարժընթացում նկատվել է որոշակի նվազում: Ֆինանսական ռեսուրսների սակավության պայմաններում վարկային տոկոսադրույքների նվազումը որոշակիորեն նպաստում է վարկավորման ծավալների աճին: Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության մակարդակի վրա էապես ազդում են նաև առևտրային բանկերի վարկավորման ծավալները (աղյուսակ 2):

Առևտրային բանկերի վարկավորման ծավալների ավելացումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ընկերությունների ֆինանսական վիճակի որոշակի բարելավմամբ և ֆինանսական հոսքերի ռացիոնալ ուղղորդմամբ: Դժվար կառավարելի ռիսկերի պայմաններում բիզնեսի անվտանգ և արդյունավետ գործունեության ապահովման համար մեծապես կարևորվում է պետական համապատասխան երաշխիքների տրամադրումը, ինչն էապես կարող է նպաստել ինչպես արդյունավետ վարկային տոկոսադրույքների ձևավորմանը, այնպես էլ ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացմանը:

Ինովացիոն և ներդրումային գործունեության ֆինանսավորման հաջորդ կարևորագույն աղբյուրը բաժնետիրական կապիտալն է: Վերջինիս ներգրավումը հատկապես հրատապ խնդիր է բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների համար: Այս առումով, ՀՀ-ում անհրաժեշտ է հետևողականորեն արմատավորել կորպորատիվ կառավարման մշակույթի սկզբունքների կիրառումը: Այդպիսի կառավարման պայմաններում էականորեն կխթանվի նորարարական գործունեությունը, որի արդյունքների կենսագործումն ուղղակիորեն կենթադրի ներդրումային գործունեության ակտիվացում:

Հայաստանի տնտեսության արդիականացման և ինովացիոն գործունեության ակտիվացման գործում մեծ դեր կարող է ունենալ **որակյալ կադրային ներուժը**: Դրա վկայություն պետք է համարել բարձր տեխնոլոգիաների ոլորտը, որի մասնագիտական ներուժը և կադրերի վարձատրության դեռևս զուսպ մակարդակը գրավիչ պայմաններ են ստեղծում տարբեր երկրներից ներդրումներ ներգրավելու համար: Ընդ որում, այս հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ ոլորտում համատեղ ընկերությունների հիմնադրման համար, ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում: Արդյունքում, էա-

²⁰ Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009-2019 թթ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ: <http://www.armstat.am>:

կանորեն կբարձրանա «ուղեղների արտահոսքի» կառավարման արդյունավետության մակարդակը²¹:

Աղյուսակ 2


«Հ առևտրային բանկերի վարկերի կազմը 2009-2019 թթ. (մլն դրամ)²²

Անվանումը	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Վարկեր, ընդամենը	746860	941491	1277302	1590866	1776571	2150326	2088168	2412506	2677091	3078548	3631158
Վարկային ներդրումներ	724851	891850	1250404	1527886	1658727	1994525	1939739	2280711	2545674	2959829	3488448
Վարկեր տարադրամով	371751	508439	768069	984807	1030898	1328414	1273082	1456533	1586726	1662575	1790970
Կարճաժամկետ	84950	79385	151451	187809	163872	223968	153295	280740	291838	277354	236570
Երկարաժամկետ	286801	429054	616618	796998	867026	1104446	1119787	1175793	1294887	1385221	1554400
Վարկեր դրամով	353100	383411	482335	543079	627829	666111	666657	824178	958948	1297254	1697478
Կարճաժամկետ	81986	96628	134598	168083	170286	118423	113568	156625	149100	194406	197347
Երկարաժամկետ	271113	286783	347737	374996	457543	547688	553089	667553	809848	1102848	1500131
Բանկերի երկարաձգված վարկեր	16861	45886	21092	54354	96524	123270	110566	99841	99635	88009	111755
Կարճաժամկետ	15965	40010	13480	47068	64145	53110	21898	30019	70742	60871	89196
Երկարաժամկետ	896	5876	7612	7286	32379	70160	88668	69821	28894	27138	22559
Բանկերի ժամկետանց վարկեր	5149	3755	5806	8626	21320	32531	37863	31954	31782	30710	30954
Կարճաժամկետ	5146	3749	5790	8449	20231	20367	21321	16215	10309	14648	16688
Երկարաժամկետ	3	6	16	177	1089	12164	16542	15739	21472	16062	14266

Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների ոլորտը երիտասարդ է. ընկերությունների մեծ մասը հիմնադրվել է 2000-2019 թթ.: Վերջին տարիներին ոլորտում գրանցվել է տեղական նորաստեղծ ընկերությունների և արտասահմանյան մասնաճյուղերի թվի կտրուկ աճ (գծապատկեր 2):

²¹ Տե՛ս Վ. Բոստանջյան, Ա. Զախարյան, «Հ տնտեսավարող սուբյեկտների ինովացիոն զարգացումը տարածաշրջանային համագործակցության պայմաններում, «Այլընտրանք» գիտական հանդես, 2019, N3, էջ 149-157:

²² Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009-2019 թթ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ: <http://www.armstat.am>:



Գծապատկեր 2. ՏՀՏ ընկերությունների թիվը Հայաստանի Հանրապետությունում (2009-2018 թթ.)²³

Հայաստանում ներկայումս գործում է տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի շուրջ 800 ընկերություն: Մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ գործող ընկերությունների թիվը տարեցտարի աճում է հատկապես Երևանում, ինչպես նաև Շիրակի և Լոռու մարզերում: 2018 թ. ՏՀՏ ոլորտում զբաղվածների թիվը, 2017 թ. համեմատ, աճել է շուրջ 27%-ով: Ձևավորվել է տեխնիկական մասնագետների որակական բարձր մակարդակ ունեցող որոշակի կադրային ռեսուրս, որի կազմում են ծրագրային ապահովման ճարտարագետները, վերլուծաբանները, ծրագրավորողները, ՏՏ ծրագրերի ղեկավարները և այլք: Ընդ որում, ոլորտում վերջին տարում գրանցվել է տեխնիկական աշխատուժի արտադրողականության կտրուկ աճ²⁴:

Նորարարական քաղաքականության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման տեսանկյունից հատկապես կարևորվում է **ինովացիոն արտադրանքի նկատմամբ պետական պատվերի առկայությունը**: Նման դեպքերում, որպես կանոն, փոքրանում են արտադրական ռիսկերը, մեծանում են պետական երաշխիքներն ու իրացման հնարավորությունները և, որ ամենակարևորն է, այն կրում է կանոնավոր և առավել տևական բնույթ: Պետական պատվերի առկայությունը հատկապես կարևոր նշանակություն ունի ռազմարդյունաբերության ոլորտում, քանի որ պետությունը, հետապնդելով երկրի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակ, միևնույն ժամանակ, ապահովում է մատակարարումների անընդհատություն, ֆինանսավորման հստակություն, թողարկված արտադրանքի իրացման դյուրինություն, ինչպես նաև բարձր վարձատրվող նոր աշխատատեղեր:

Ինովացիոն արտադրանքի նկատմամբ պետական պատվերը կարևոր է ոչ միայն ռազմարդյունաբերության, այլև այն ոլորտներում, որոնք կարող են էականորեն նպաստել երկրի տնտեսության կառուցվածքի արդիականացմանը և դրանում տեխնոլոգիական ուղղությունների զարգացմանը: Այս համա-

²³ Տե՛ս ՏՀՏ ոլորտը Հայաստանում 2018, Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, դեկտեմբեր, 2018, էջ 16:

²⁴ Տե՛ս նույն տեղը:

տեքստում, սովորաբար տեղի է ունենում նաև պետական ընկերությունների վերապրոֆիլավորում, վերագործարկում և, որ չափազանց կարևոր է, տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացում: Վերջապես, պետական պատվերի կարևորությունն այն է, որ մեծապես նպաստում է պետություն-մասնավոր հատված համագործակցության ակտիվացմանը, ինչպես նաև լուրջ նախադրյալներ է ստեղծում տնտեսության առաջընթացի և կայուն զարգացման համար: Նշված դրական կողմերից բացի, պետական պատվերը թույլ է տալիս ներդրումային շրջափուլի անկման և վերելքի հատվածներում արդյունավետ կերպով ներազդել ընդհանուր տնտեսական իրավիճակի վրա: Շատ երկրներում վերելքի հատվածներում շահույթի «պրոգրեսիվ հարկման» միջոցով ստեղծվում են «հակաշրջափուլային» ներդրումային հիմնադրամներ, որոնք օգտագործվում են անկման հատվածում ներդրումների ընդունելի մակարդակի պահպանման նպատակով: Այսպիսի մոտեցում կիրառվել է Շվեդիայում, Դանիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում և Իսպանիայում²⁵: Զարգացած երկրներում պետական պատվերի և դրանով պայմանավորված ներդրումային քաղաքականության ձևավորման հիմք են դառնում տեխնոլոգիական ուղղությունների զարգացման, նոր արտադրանքի արտադրության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացման և պետական ընդհանրական բնույթ կրող երկարաժամկետ նպատակային ծրագրերը²⁶:

Արտաքին տնտեսական կապերի ընդլայնման և ինովացիոն արտադրանքի արտահանման պայմանների բարելավման գործում պետական աջակցությունն ունի առանցքային նշանակություն: Այն, բացի նպատակամետ և արդյունավետ ներդրումային քաղաքականությունից, պետք է դրսևորվի նաև լուծման ենթակա խնդրի վերաբերյալ կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին և ցուցահանդեսներին բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովմամբ: Արդյունքում, պետական աջակցությունը հիմնականում պետք է ուղղված լինի համաշխարհային շուկայում հայկական ինովացիոն արտադրանքի ճանաչելիության բարձրացմանը և պահանջարկի խթանմանը: Պետական աջակցության հիմնական ուղղությունները կարող են ձևավորվել՝ ելնելով միջկառավարական համաձայնագրերի պահանջներից՝ համատեղ շուկաների և/կամ ընկերությունների ստեղծման ճանապարհով: Մեծ դերակատարում կարող է ունենալ նաև համաշխարհային ճանաչում ունեցող խոշոր ընկերությունների հետ ՀՀ ընկերությունների փոխշահավետ համագործակցության հաստատումը՝ օգտագործելով ՀՀ կադրային ներուժը և այդ ընկերությունների գործարար կապերը, կապիտալը և փորձը:

Ինստիտուցիոնալ զարգացման տեսանկյունից **արտաքին գործարար կապերի և շուկաների ընդլայնման հնարավորությունների** ճիշտ օգտագործումը կարող է էական ազդեցություն ունենալ ինովացիոն և ներդրումա-

²⁵ Տե՛ս **Булавко О.А.**, Зарубежный опыт регулирования и стимулирования инвестиционной сферы, научный журнал «Общество. Среда. Развитие», <https://cyberleninka.ru/article/n/zarubezhnyy-opyt-regulirovaniya-i-stimulirovaniya-investitsionnoy-sfery>:

²⁶ Տե՛ս **Վ. Բոստանջյան, Ա. Զախարյան**, Ինովացիոն գործունեության խթանման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏԿ», 2019, N3, էջ 71-91:

յին գործունեության վրա: Նման մոտեցումը պայմանավորված է ոչ միայն արտաքին շուկաներում հայրենական ինովացիոն արտադրանքի անխոչընդոտ իրացմամբ, այլև նոր տեխնոլոգիաների փոխանակմամբ, համատեղ տեխնոլոգիական մշակումների իրականացմամբ, նոր լաբորատորիաների ստեղծմամբ, գործողների արդյունավետության բարձրացմամբ, տեխնոլոգիական ոլորտում տարբեր երկրների բացարձակ և համեմատական առավելությունների օգտագործմամբ և այլն:

ՀՀ բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման առումով հիմնական շեշտը դրվում է Սփյուռքի ներուժի օգտագործման վրա, այն դեպքում, երբ ոչ միայն Հայաստանն ունի Սփյուռքի ներուժի օգտագործման կարիք, այլև Սփյուռքն ունի հանրապետությունում գործունեություն իրականացնող որակյալ մասնագիտական ներուժի օգտագործման անհրաժեշտություն: Դրա վկայություն պետք է համարել այն, որ ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի կադրերով մեծապես հետաքրքրված են նաև տեխնոլոգիական զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրները: Այս առումով, հանրապետությունը կարող է և պետք է լուրջ ֆինանսական օգուտներ ակնկալի ոչ միայն սեփական կադրերի աշխատանքից, այլև արտաքին շուկաներում մեր երկրում արտադրված տեխնոլոգիական արտադրանքի իրացումից: Դա ենթադրում է տարբեր երկրներում առևտրային ներկայացուցչությունների հիմնում՝ հենվելով ինչպես դրանցում գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների, այնպես էլ հայ համայնքի գործարար ներուժի վրա: Համաշխարհային շուկայում ՀՀ-ն դեռևս ունի ճանաչելիության խնդիր, որը պետք է լուծվի ոչ միայն մեր երկիրը որպես զբոսաշրջության համար գրավիչ երկրի նկարագրությամբ, այլև որպես տեխնոլոգիական զարգացման ծանրակշիռ ներուժ ունեցող պետության ներկայացմամբ: Դրան հատկապես կարող է նպաստել գործարար զբոսաշրջությունը, երբ հայրենական զբոսաշրջային գործակալությունները զբոսաշրջիկների այցերը կկազմակերպեն ոչ միայն պատմամշակութային, այլև բիզնեսի և տեխնոլոգիական կենտրոններ: Ակնհայտ է, որ այդ նպատակով պետք է կատարվի համակողմանի և հետևողական աշխատանք:

Ինովացիոն և ներդրումային գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի շարքում առանձնահատուկ է **ազատ տնտեսական գոտիների** դերը: Այդպիսի գոտիներում գործարար ակտիվությունը խթանելու նպատակով, սովորաբար, իրականացվում է այնպիսի ֆինանսական քաղաքականություն, որը մեծացնում է բիզնես վարելու գրավչությունը, ներդրումների պաշտպանվածության աստիճանը և հարկային արտոնությունների տրամադրման հավանականությունը: Ներկայումս Հայաստանում գործում են «Ալյանս», «Մերիդիան», «Մեդրի» և «Էկոս» ազատ տնտեսական գոտիները²⁷:

«Ալյանս» ազատ տնտեսական գոտին բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն ունի էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության ոլորտներում: «Մերիդիան» ազատ տնտեսական գոտու գործառնական տեսակը սահմանված է որպես

²⁷ Տե՛ս ՀՀ-ում գործող ազատ տնտեսական գոտիներ, <https://mineconomy.am/page/360>:

արտադրարդյունաբերական՝ ոսկերչության, ակնագործության ու ժամագործության, իսկ «Մեղրի» ազատ տնտեսական գոտունը՝ որպես արտադրարդյունաբերական և լոգիստիկ՝ գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, էլեկտրականության մատակարարման, առևտրի, փոխադրումների և պահեստային տնտեսության, մասնագիտական և տեխնիկական գործունեության, մշակույթի, զբոսաշրջության, զվարճությունների և հանգստի ոլորտներում:

Որոշակի տարբերություններով առանձնանում է «Էկոս» ազատ տնտեսական գոտին, որի գործունեությունն ուղղված է բարձր տեխնոլոգիաների զարգացմանը: Գոտու հիման վրա ստեղծվում է յուրահատուկ էկոհամակարգ, որտեղ գործելու են մի շարք ենթակառուցվածքային ծառայություններ՝ կրթական-հաղորդակցական նախագծերից, հետազոտական լաբորատորիաներից մինչև էլեկտրոնային հարթակներ՝ նոր ձևավորվող նախագծերում ներդրումներ ներգրավելու նպատակով: Ազատ տնտեսական գոտու շրջանակներում նախատեսվում է ECOS արդյունաբերական մայնինգի կենտրոնի ստեղծումը, որը, դառնալով ինովացիոն ստարտափների տեխնոլոգիական կլաստերի մի մասը, տվյալ գոտու համար ծառայելու է որպես տվյալների պահպանման կենտրոն: ECOS-ը ինովացիոն էկոհամակարգ է, որի կազմում արդյունաբերական մայնինգ կենտրոններ են, վենչուրային հիմնադրամ, ինովացիաների մշակման համար նախատեսված հետազոտական լաբորատորիա, կրթական հարթակ, արքսելերացիոն ծրագրեր և այլն: ECOS նախագծի նպատակն է բարենպաստ պայմաններ ստեղծել ՀՀ բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող այն կազմակերպությունների համար, որոնք թողարկում են արտահանմանն ուղղված արտադրանք:

Տեխնոպարկերի, տեխնոպոլիսների, բիզնես-ինկուբատորների և գիտական լաբորատորիաների առկայությունը սկզբունքային նշանակություն ունի ինովացիոն և ներդրումային գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման տեսանկյունից: Ինովացիոն կլաստերների հիմնական տարբերությունն այլ կազմակերպարավական ձևերից պայմանավորված է ներքին մրցակցային միջավայրում և համաշխարհային շուկայում ուժեղ մրցակցային դիրքերի առկայությամբ: Ինովացիոն կլաստերներում առկա է մրցակցության և կոոպերացման բարդ համադրություն: Գտնվելով կորորդիանատների տարբեր համակարգերում՝ դրանք միմյանց լրացնում են հատկապես նորարարական գործընթացներում: Ինովացիոն կլաստերում հստակեցվում են միջկազմակերպական կապերը, հաստատվում է արդյունավետ կոոպերացում, համաձայնեցվում են տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող բազմաթիվ կազմակերպությունների ծրագրերը: Ինովացիոն կլաստերները ներկայումս դիտարկվում են որպես միջկազմակերպական փոխգործակցության կազմակերպման լավագույն ձևաչափ, որն ունակ է նորարարությունների կիրառմամբ ներքին ենթակառուցվածքներն ու արտաքին կապերն օպերատիվորեն համապատասխանեցնել արտաքին միջավայրի փոփոխություններին: Ներկայումս ՀՀ-ում այդպիսի քայլերի իրականացմանը մեծապես նպաստում են Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը և ինովացիոն զարգացման ուղղվածությամբ մի շարք ընկերություններ:

Ինովացիոն զարգացման և ներդրումային գործունեության ակտիվացման համար չափազանց կարևոր գործոն է **բարձր տեխնոլոգիաների ոլոր-**

տի կառույցների հետ արտաքին կապերի և տվյալ երկրում այդ բնագավառի միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների առկայությունը:

Այդ ուղղությամբ ՀՀ-ում ստեղծված են բարենպաստ նախադրյալներ: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դրեյվեր Վենչուր Նեթվորկ» կազմակերպության միջև կնքվել է համագործակցության հուշագիր, համաձայն որի՝ 2020 թ., պետական ֆինանսավորմամբ, այդ ոլորտի 15 ձեռներեցների հնարավորություն կընձեռվի սովորելու Սիլիկոնյան հովտի առաջատար ձեռնարկատիրական համալսարանում²⁸: Ըստ հուշագրի՝ պետական ֆինանսավորմամբ պետք է իրականացվի «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը: 2019 թ. տեղի ունեցավ «Դիջիթալ Էքսպո» ցուցահանդեսը, որտեղ լայնորեն ներկայացված էին նորաստեղծ ստարտափ, ինժեներական և ռազմարդյունաբերական ընկերությունները: Մասնավորապես, ցուցահանդեսում ներկայացված էին հայկական ստարտափ 17 և ինժեներական 25 ընկերություններ, որոնցից 10-ը՝ ռազմարդյունաբերության ոլորտից: Նույն ժամանակահատվածում տեղի ունեցավ նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը, որի շրջանակում Հայաստան ժամանեցին ավելի քան 20 երկրների նախարարական պատվիրակություններ: «Միասին դեպի թվային ապագա» կարգախոսի ներքո դրան հաջորդեց «N2» համաժողովը, որին ներկա էր նաև ICANN-ի նախագահության ղեկավար կազմը:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի արտաքին կապերի զարգացման տեսանկյունից անհրաժեշտ է կարևորել Քաթարի Դոհա քաղաքում 2019 թ. «Անվտանգ խելացի քաղաքներ» խորագրի ներքո տեղի ունեցած Մերձավոր Արևելքի խոշորագույն տեխնոլոգիական գիտաժողով-ցուցահանդեսը (QITCOM), որտեղ «Հայաստան» միասնական տաղավարով ներկայացված էին 11 հայկական տեխնոլոգիական ընկերություններ: Միջոցառումն ընդգրկում էր ավելի քան 500 մասնակից, շուրջ 300 միջազգային և տեղական ընկերություններ, 100 միջազգային և տեղական ստարտափներ: Միջոցառման շրջանակում կազմակերպվեց նաև «Սմարթ Սիթի Էքսպո» ցուցահանդեսը, որը լայն հնարավորություն ընձեռեց տարածաշրջանի պետություններին՝ սեփական ինովացիոն լուծումները ցուցադրելու համաշխարհային մեծության կազմակերպություններին²⁹: 2019 թ. միասնական տաղավարով հայկական տեխնոլոգիական ընկերությունները մասնակցել են նաև մի շարք միջազգային ցուցահանդեսների՝ «VivaTech 2019»՝ Ֆրանսիայում, «InnoWeek.uz 2019»՝ Ուզբեկստանում, «QITCOM 2019»՝ Քաթարում, «SWITCH 2019»՝ Սինգապուրում: Ցուցահանդեսներում հայկական և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև մասնակից երկրների ներկայացուցիչների միջև ձեռք են բերվել համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություններ, կնքվել են փոխըմբռնման հուշագրեր:

Հանրապետությունում ինովացիոն գործունեության ակտիվացման նպատակով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

²⁸ Տե՛ս ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ 2019 թ. ընթացքում կատարած հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվության սեղմագիր, https://hti.am/pages.php?lang=1&id=107&page_name=reports:

²⁹ Տե՛ս նույն տեղը:

նում ձևավորվել է մասնագիտական-խորհրդակցական մարմին, որը գործում է ինժեներական նորարարությունների և ստարտափ էկոհամակարգի, թվայնացման, նորմատիվ իրավական դաշտի, տեխնոլոգիական ոլորտում կրթության և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, տեխնոլոգիական շուկաների զարգացման, ռազմարդյունաբերության, պաշտպանական տեխնոլոգիաների և տեխնոլոգիական զարգացման այլ ուղղություններով: Նշված քայլերը էականորեն կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական ոլորտի միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հիմնադրմանը և այդ ուղղությամբ գործունեության ակտիվացմանը:

Եզրակացություններ: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս պայմաններում ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը կարող է նպաստել արդյունավետ ազգային նորարարական համակարգի ստեղծմանը: Վերջինս բնութագրվում է որպես պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունների ամբողջություն, որի շրջանակում կազմակերպվում է նոր գիտելիքի ստեղծման, զարգացման, պահպանման, տարածման և տեխնոլոգիաների, ապրանքների և ծառայությունների փոխակերպման գործընթացը: Լ.Է. Մինդելին ազգային նորարարական համակարգի ստեղծումը կապում էր կայուն տնտեսական աճին անցման հնարավորության հետ: Ազգային նորարարական համակարգի հիմնական մասնակիցներն են պետական կառավարման մարմինները, բիզնեսի ներկայացուցիչները, գիտահետազոտական և տեխնոլոգիաների առևտրայնացմամբ զբաղվող կառույցները: Ակնհայտ է, որ ինովացիոն գործունեության խթանման հարցում էապես կարևորվում է պետության դերը: Ջ. Գելբրեյտն իր «Նոր ինդուստրիալ հասարակություն» աշխատությունում հիմնավորել է պետական միջամտության անհրաժեշտությունը տնտեսության տեխնոլոգիական զարգացման գործում: Նրա կարծիքով՝ տեխնիկայի զարգացման և տեխնոլոգիաների կատարելագործման ծախսերը շատ մեծ են, և սխալ տեխնիկական կամ մարքեթինգային լուծումները կարող են հանգեցնել զգալի վնասների: Երկրի տնտեսության ինովացիոն զարգացման նպատակով ռազմավարական նշանակություն ունեցող ինովացիոն նախագծերի պետական ֆինանսավորումը կհանգեցնի արտադրական ծախսերի և ռիսկերի էական կրճատմանը: Միաժամանակ, Ջ. Գելբրեյտն ազգային նորարարական համակարգի ձևավորման գործում կարևորում էր նաև նորարարական գործունեության տարրերի և սուբյեկտների միջև կոոպերացիոն ու տեղեկատվական կապերի առկայությունը, միջնուղային և միջառարկայական փոխգործակցությունը, որոնք հանգեցնում են ընդհանուր սիներգետիկ էֆեկտի:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն և դրանով պայմանավորված ներդրումային գործունեության ակտիվացման համար անհրաժեշտ է հետևողականորեն ձևավորել այդ գործընթացի ինստիտուցիոնալ հիմքերը՝ որպես Հայաստանում ինովացիոն արտադրանքի ստեղծման ու առաջխաղացման, համաշխարհային շուկայում հանրապետության մրցունակության բարձրացման և տնտեսության կայուն զարգացման կարևորագույն պայման:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ 2019 թ. կատարած հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվության սեղմագիր, https://hti.am/pages.php?lang=1&id=107&page_name=reports:
2. Բոստանջյան Վ., Ջախարյան Ա., Ֆինանսական հնարավորությունների ընդլայնման ուղիները ՀՀ բաժնետիրական ընկերություններում, «Բանբեր ՀՊՏՀ», 2018, N2:
3. Բոստանջյան Վ., Ջախարյան Ա., ՀՀ տնտեսավարող սուբյեկտների ինովացիոն զարգացումը տարածաշրջանային համագործակցության պայմաններում, «Այլընտրանք» գիտական հանդես, 2019, N3:
4. Բոստանջյան Վ., Ջախարյան Ա., Ինովացիոն գործունեության խթանման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», 2019, N3:
5. ՀՀ-ում գործող ազատ տնտեսական գոտիներ, <https://mineconomy.am/page/360>:
6. ՏՀՏ ոլորտը Հայաստանում 2018, Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, դեկտեմբեր, 2018:
7. Баркер А., Алхимия инноваций, М., Издательство «Вершина», 2004, 224 с., ISBN 5-94696-038-5.
8. Богатова Е.В., Инновационная экономика: монография / Е.В. Богатова. Москва: Издательство «Русайнс», 2014, 88 с.
9. Булавко О.А., Зарубежный опыт регулирования и стимулирования инвестиционной сферы, научный журнал «Общество. Среда. Развитие», <https://cyberleninka.ru/article/n/zarubezhnyy-opyt-regulirovaniya-i-stimulirovaniya-investitsionnoy-sfery>.
10. Гэлбрейт Д.К., Экономические идеи, https://studwood.ru/1560192/ekonomika/idei_printsipy_gelbreyta.
11. Гончаренко Л.П., Инновационный менеджмент: Учебник для вузов. 2-е изд., Издательство Российского экономического университета имени Г.В. Плеханова, М., 2018, 487 с.
12. Ильенкова С.Д., Инновационный менеджмент: учебник для студентов вузов, М., Издательство «ЮНИТИ-ДАНА», 2015, 335 с.
13. Миндели Л.Э., Основы инновационного менеджмента. Теория и практика: Учебник /Л.С.Барютин и др.; под ред. А.К. Казанцева, Л.Э. Миндели. 2-е изд. перераб. и доп., М., «Издательство «Экономика», 2004, 518 с.
14. Разумовская Е.А., Фоменко В.В., Страхование дело: учебное пособие. Екатеринбург: Гуманитарный университет, 2016, 250 с.
15. Фатхутдинов Р.А., Инновационный менеджмент: Учебник для вузов. 6-е изд. - СПб.: Питер, 2011, 448 с.

16. Чижова Л.С., Инновационная экономика: занятость, трудовая мотивация, эффективность труда: монография. М., Экономика, 2011, 432 с.
17. Шалаев И.А., Теоретические основы и особенности формирования инновационной среды региональной экономической системы, Вестник ОрелГИЭТ, 2013, №4(26), <https://orelgiet.ru/docs/262013/25.pdf>.
18. Шапкин А.С., Шапкин В.А., Экономические и финансовые риски. Оценка, управление, портфель инвестиций: Учебное пособие, 9-е изд. М., Дашков и К, 2018.
19. Шарп У.Ф., Александер Г.Д., Бэйли Д.В., Инвестиции. Учебное пособие, М., Издательство: НИЦ Инфра-М., 2016, 1040 с.
20. Afuah A., Innovation Management: Strategies, Implementation, and Profits. Oxford University Press; 2-nd edition, 2002, 400 p.
21. Govindarajan V., Trimble C., The Other Side of Innovation: Solving the Execution Challenge. Harvard Business Review, 2010, 226 p.

ВАРДАН БОСТАНДЖЯН

*Профессор кафедры финансового учета ЕГУ,
доктор экономических наук*

АРМИНЕ ЗАХАРЯН

*Научный сотрудник института экономики им. М. Котаняна НАН РА,
кандидат экономических наук*

Институциональные основы инновационной деятельности в Республике Армения. – Статья посвящена изучению методов и механизмов формирования институциональных основ инвестиционной и инновационной деятельности в Республике Армения, факторов, обуславливающих эффективное применение данных методов и механизмов, а также государственной политики стимулирования инновационной и инвестиционной деятельности.

В Республике Армения особенно важно наличие следующих институциональных основ инновационной деятельности: благоприятная инвестиционная среда, систематизированное и комплексное правовое поле, эффективная инновационная инфраструктура и кадровый потенциал, доступные источники финансирования, государственный заказ на инновационную продукцию, благоприятные условия для экспорта инновационной продукции, деловые связи с внешними рынками, свободные экономические зоны, инновационные кластеры (технопарки, технополисы, бизнес-инкубаторы и научные лаборатории). В статье на примере компаний сферы высоких технологий Республики Армения обсуждены определенные механизмы активизации их инновационной и инвестиционной деятельности.

Ключевые слова: экономика, инвестиции, инновационная деятельность, стимулирование, государственная политика, развитие, эффективность.

JEL: D20, G02, O32

YARDAN BOSTANDJYAN

*Professor at the Chair of Financial Accounting at YSU,
Doctor of Economics*

ARMINE ZAKHARYAN

*Researcher at the Institute named
after M. Kotanyan, NAS RA, PhD in Economics*

Institutional Bases of Innovative Activity in the Republic of Armenia.– The paper is devoted to the study of methods and mechanisms for the formation of the institutional foundations of investment and innovation in the Republic of Armenia, the factors that determine the effective application of these methods and mechanisms, as well as the state policy of stimulating innovation and investment. In the Republic of Armenia, the presence of the following institutional foundations of innovation activity is especially important: a favorable investment environment, a systematic and comprehensive legal framework, an effective innovation infrastructure and human resources, available sources of financing, a state order for innovative products, favorable conditions for the export of innovative products, business relations with external markets, free economic zones, innovation clusters (technoparks, technopolises, business incubators and scientific laboratories). The paper, using the example of high-tech companies in the Republic of Armenia, discusses certain mechanisms for enhancing their innovation and investment activities.

Key words: *economy, investment, innovation activity, promotion, public policy, development, efficiency.*

JEL: D20, G02, O32